




Խաղաղության Հասար

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ

Խաղաղության պաշտպանության հարցն արդիականության կարևորագույն խնդիրներից մեկն է, որն արդարորեն հուզում է ամբողջ մարդկությանը, այդ թվում ման քրիստոնեական աշխարհը համայն:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը խաղաղության պաշտպանության հարցը համարել է իր սրտին մոտ խնդիր և իր էջերը լայնորեն տրամադրել այդ կենսական հարցի պաշտպանությանը:

Խաղաղությունն Աստուծո կամքն է և ուխտն աշխարհի և մարդկության հետ. «Ուխտ իմ որ ընդ մեա, ուխտ կենաց և խաղաղության» (Մատթեա Բ 5):

Հայաստանյայց եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, հասկանում է, թե ինչ են նշանակում խաղաղության պաշտպանությունն ու նրա կարևորությունը և անհրաժեշտությունը ման մեր ժողովրդի կյանքում:

Հայրենական պատերազմից հետո, երբ սկիզբ առավ խաղաղության պաշտպանության շարժումը, Մայր Աթոռը և Հայոց Հայրապետները ջերմորեն մասնակցել են հանուն խաղաղության պաշտպանության կատարված միջազգային, միջեկեղեցական համագումարներին, ասել հոգուտ խաղաղության իրենց կենդանի խոսքը:

Այդ խոսքը եղել է սուրբ Ավետարանի խաղաղության երկնապարզ Կատգամների ճշմարիտ արտահայտությունը:

«Էջմիածին» ամսագրում տպագրվել են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետների՝ հոգուտ խաղաղության պաշտպանության արտասանած ճառերը, նրանց ելույթները միջազգային բեմերից՝ խաղաղությանը նվիրված:

Տ. Տ. Գևորգ Զ և Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետները հաճախ անձամբ մասնակցել են խաղաղության կոնֆերանսների՝ ի գլուխ հայ եկեղեցու պատվիրակությունների: Խաղաղության այդ համագումարներին իրենց կարևոր մասնակցությունն են բերել ման սփյուռքի հայ եկեղեցու բարձրաստիճան երկայացուցիչները:

«Էջմիածին» ամսագիրն իր էջերում հաճախ իր խմբագրականներով անդրադարձել է խաղաղության պաշտպանության հարցերին: Հիշենք խաղաղության ի նպաստ ամսագրի բազում խմբագրականներից մի քանիսը:

Խաղաղության պատգամը (1952, Ա 3).

Վասն խաղաղության ամենայն աշխարհի (1952, Գ 13).

Հայ եկեղեցին խաղաղության համար պայքարի ճակատում (1952, Ե 7).

Հանուն խաղաղության (1955, Ե 3).

Վասն խաղաղության ամենայն աշխարհի (1959, է 3).

Հանուն խաղաղության (1960, Ը 3).

Եւ լերկիր խաղաղութիւն (1961, է 3):

Խաղաղության համաշխարհային վեհա-
ժողով Մոսկվայում (1962, Ը 3).

Կյանքի և խաղաղության ուխտը (1964,
Ը—Թ 19).

Խաղաղությունը Աստուծո կամքն է (1969,
Է—Ը 3).

Խաղաղությունը Աստուծո պարգևն է և
մարդկության կամքը (1973, ԺԱ 3):

«Էջմիածին» ամսագիրը Խաղաղության
պաշտպանության ճակատում վերնագրի
տակ տարիներ շարունակ, 1949 թվականից
սկսած, հատուկ էջ է բացել մասն հանգամա-
նորեն ներկայացնելու համար մայր հայրե-
նիքում և մեր հանրապետության սահման-
ներից դուրս խաղաղության համար տարվող
բոլոր ջանքերի ու միջազգային կոնֆերանս-
ների նյութերի հրատարակումով:

Մայր Աթոռի պաշտոնաթերթը, խոսելով
խաղաղության պաշտպանության հարցերի
մասին, միաժամանակ մտահոգված է եղել
հայ ժողովրդի և մեր եկեղեցու, մեր վերա-
ծնված Հայոց աշխարհի անվտանգության,
ապահովության ու խաղաղության հարցե-
րով:

1949 թ. Ստոկհոլմի խաղաղության
պաշտպանության կոնֆերանսի կոչով
սկիզբ առավ խաղաղության պաշտպանու-
թյան համաշխարհային շարժումը: Այդ
շարժման անդրանիկ կոչը լայն արձագանք
գտավ մաս հայ հավատացյալ ժողովրդի
սրտում: Հայաստանյայց առաքելական եկե-
ղեցին, Ամենայն Հայոց Հայրապետության
թելադրությամբ և գլխավորությամբ, իր
խաղաղասիրական ձայնը միացրեց՝ աշ-
խարհում խաղաղություն պահանջող բարի
կամքի տեր բազմամիլիոն մարդկանց ձայ-
նին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին
խաղաղության շարժման ստեղծման առա-
ջին իսկ օրից իր գիտակից և դրական վե-
րաբերմունքն է արտահայտել հոգուտ այդ
շարժմանը, որովհետև հայ եկեղեցին միշտ
էլ խաղաղության կողմնակից է եղել իր ողջ
պատմության ընթացքում: Հայ ժողովրդի և
հայ եկեղեցու համար հարցերի հարցն է
խաղաղության պաշտպանության անհրա-
ժեշտությունը: Խաղաղությունն Աստուծո
կամքն է և պատգամը: Աստուծո ուխտը
աշխարհի և մարդկության հետ՝ կյանքի և
խաղաղության ուխտ է. «Ուխտ իմ, որ ընդ
մեզ կենաց և խաղաղութեան» (Մատթ Բ 5):

Այս մտածումների լույսի տակ 1949 թվա-
կանին խաղաղության պաշտպանության ի

նպատակ է. Էջմիածնից հնչեց Գևորգ Զ եր-
ջանկահիշատակ Հայոց Հայրապետի ձայ-
նը. «Մենք այսօր իրավունք չունենք լռելու,
երբ համայն մարդկության ապագա ան-
վտանգությունը և խաղաղ կյանքի խոստո-
մը ենթակա են վտանգի, և տևական պատե-
րազմից հոգևած մարդկությունը կանգնած
է նոր պատերազմի, նոր թշվառությանց ա-
ռաջ: Մենք այսօր իրավունք չունենք լռե-
լու, այլ պարտավոր ենք հանդես գալու և
ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ,
որը հակասում է համարյա ամբողջ մարդ-
կության դավանած կրոնների սիրո և եղ-
բայության գաղափարին, մարդկության
դավանած բարոյական սկզբունքներին և
շահերին»:

Նույն թվականի ապրիլին Գևորգ Զ կա-
թողիկոսը հատուկ գրությամբ դիմում էր
հայ եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռ-
ներին՝ Տանն Կիլիկիո Գարեգին կաթողի-
կոսին, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց
պատրիարքական Աթոռներին, բոլոր թեմա-
կալ առաջնորդներին և կոչ էր անում. «Ըստ
ամենայնի գորավիզ լինել խաղաղության
կողմնակիցների համաշխարհային խորհրդ-
դին, հնչեցնել իրենց ձայնը բոլոր նրանց
դեմ, որոնք ձգտում են նոր պատերազմ
հրահրել, և միացնել իրենց ձայնը բոլոր
նրանց ձայներին, որոնք իրենց աստվածա-
հաճո գործողություններով ձգտում են կա-
սեցնել մարդկության գլխին կախված նոր
արհավիրքը» («Էջմիածին», 1950, Գ—Դ
3):

Այդ նույն օրերին Գևորգ Զ կաթողիկոսն
Արևմտյան Եվրոպայի թեմերի հայոց հայ-
րապետական պատվիրակ տ. Արտավազդ
արքեպիսկոպոս Սյուրմեյանին հանձնարա-
րում էր Մայր Աթոռի, հայ եկեղեցու և հայ
ժողովրդի անունից հանդես գալ Փարիզում
գումարված խաղաղության կողմնակիցների
առաջին կոնֆերանսում և ջերմորեն պաշտ-
պանել նրա խաղաղասիրական միջոցառում-
ներն ու իդեալները. «Հայաստանյայց առա-
քելական եկեղեցին,—գրում էր Գևորգ
Զ-ը,—հավատարիմ իր ավանդական սկզբ-
բունքներին, իր ձայնն է բարձրացնում խա-
ղաղության օգտին և անվերապահ միանում
է խաղաղության կողմնակիցների համաշ-
խարհային ասամբլեայի մշտական կոմիտեի
Ստոկհոլմի նստաշրջանի բանաձևերին:
Պատերազմ՝ նշանակում է միլիոնավոր
մարդկանց մահ, շեն քաղաքների և մշակու-
թային արժեքավոր ստեղծագործությունների
ոչնչացում: Խաղաղություն՝ նշանակում է
ապրել, ստեղծագործել և երջանիկ կյանք
վարել: Հայ ժողովրդիդ, որը պատմական
անցյալում լիապես ճաշակել է պատերազմի
դառնությունը, որ՝ առաջին համաշխարհա-

յին պատերազմում մեկուկես միլիոն զոհ է տվել և երկրորդ հայրենական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրատուն զավակների կորուստն է ողբացել, խաղաղություն է պահանջում»:



1950 թվականի ապրիլի 12-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը ևս իր ձայնն էր բարձրացնում հանուն խաղաղության պաշտպանության:

1950 թ. հունիսի 29-ին Գևորգ Զ կաթողիկոսը հայրապետական իր համաձայնությունը տվեց Հայկ. ՍՍՀ խաղաղության կողմնակիցների հանրապետական հանձնաժողովի ատոմային զենքն արգելելու ստորագրությունների հավաքման որոշմանը և նույն տարվա հուլիսին առանձին մի պատգամավորություն ուղարկեց Չեխոսլովակիա՝ Լուգաշովիցայում գումարված քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսին՝ Էջմիածնի միաբան տ. Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի գլխավորությամբ:

1950 թ. օգոստոսի 5-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հրապարակվեց Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ս. Ալեքսիի, համայն Վրաց Պատրիարք-

կաթողիկոս Տ. Կալիստրատի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի միաձայն դիմումը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին՝ պայքարելու հանուն խաղաղության:

Քրիստոնեական երեք եկեղեցիների պետերի սույն կոչը լայն արձագանք գտավ նաև հայ հավատացյալ ժողովրդի մեջ, ինչպես նաև հայ հոգևորականության բոլոր խավերում:

Այդ օրերին Ռուսիկիայի հայոց ստաջնորդ տ. Վազգեն եպիսկոպոս Պաճյանը, այժմյան Ամենայն Հայոց կաթողիկոսը, արտահայտելով ափսոսքի ողջ հայ հոգևորականության մտահոգություններն ու իղձերը, գրում էր Գևորգ Զ կաթողիկոսին. «Մխիթարության և ոգևորության զգացումներով տոգորվեցալ իմ և մեր հավատացյալների հոգիները՝ կարդալով այն արտաշարժ կոչը, որ օգոստոսի 5-ին Ձերդ Վեհափառությունը, համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի և համայն Վրաց կաթողիկոս Կալիստրատի հետ միասնաբար ուղղած էք աշխարհի բոլոր քրիստոնյաներուն խաղաղության պաշտպանության, ընդդեմ բոլոր անոնց, որոնք դավեր կնկույթեն ժողովուրդներու կյանքի խաղաղ զարգացման դեմ» («Էջմիածին», 1950, Թ 27):

Նույն թվականի հոկտեմբերի 12-ին Մոսկվայում գումարվող խաղաղության կողմնակիցների համամիութենական կոնֆերանցիայի պատգամավոր ընտրվեց Գևորգ Զ-ը Մովսեսական Հայաստանի ժողովրդի կողմից: Այնուհետև կոնֆերանսում նա ընտրվեց խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ և կոնֆերանսում ունեցած իր պատմական ելույթում շարադրեց խաղաղության նկատմամբ քրիստոնեական սկզբունքը Սվետարանի պատգամների լույսի տակ՝ դատապարտելով պատերազմը և շեշտելով. «Պատերազմի հրձիգները ի՞նչ բարոյական իրավունք ունեն մարդու՝ այդ բարձրագույն էակի կյանքի հետ խաղալու»:

Այնուհետև, հետագա տարիներին, մինչև իր մահը, 1954-ի մայիսը, Գևորգ Զ կաթողիկոսը միշտ մասնակցեց խաղաղության ի նպաստ գումարված կոնֆերանսներին և իր ձայնը բարձրացրեց քրիստոնեական լավատեսությամբ այն մասին, որ «կգա ժամանակ, երբ պատերազմի միտքն ու ծրագիրը կմեռնեն և կանւանան, և մարդկությունը կազատվի օղոս մղձավանջից և կհանգըստանա»:

1955 թվականից սկսած հայ եկեղեցու նոր Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա-ն, անշեղորեն և ավելի մեծ արդյունավորությամբ ու երիտասարդական կորովով շարունակում է իր նախորդի նաև խաղաղասիրական ու

մարդասիրական գործունեությունը՝ հոգուտ խաղաղության:

Հայոց ալժմյան կաթողիկոսի 20-ամյա գործունեության մեջ խաղաղության պաշտպանության հրամայականը և ճշմարիտ հայրենասիրությունն իրար լրացնող երկու լուսավոր և իրավ սկզբունքներ են Ավետարանի խաղաղության պատգամի և քրիստոնեական մարդասիրության լույսի մեջ պայծառացած:

1959 թ. հուլիսի 15-ին Հայոց Հայրապետը ջերմագին ուղերձ է հղում Ստոկհոլմի խաղաղության համաշխարհային կոնֆերանսին՝ ճշելով. «Համուն հայ եկեղեցվո և մեր հավատացյալ ժողովուրդին մենք ի սրտե կմաղթենք ձեզ լիակատար հաջողություն ի միխթարություն և հուրախություն բոլոր ժողովուրդներու: Մենք ևս, ոգեշնչված նույն խղճանքով, բոլոր եկեղեցիների կողքին, կոչ կընենք պետություններու մեծարգո դեկավարներուն լսել համայն մարդկության խղճի ձայնը և սրբությամբ պահպանել խաղաղության աստվածառաք պատգամը, արգիլել ամեն տեսակի ատոմական զենքերու գործածություն և փորձարկումներ ու աշխարհի վրա վերջնականապես հաստատել վիճելի հարցերը փոխադարձ հասկացողությամբ և արդարությամբ լուծելու փրկարար և կենարար կանոնը:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք ըլլալ և վիճիլ. խաղաղությունը, սակայն, վեր պետք է ըլլա ամեն վեճն և դառնա բոլորին համար մտածելու և գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու:

1959 թ. մայիսի 26-ին Հայոց Հայրապետը Մոսկվայում մասնակցում էր խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի համագումարին, ուր հանդես էր գալիս բովանդակալից ճառով՝ ճշելով. «Խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերու ներդաշնակորեն զարգացող գոյավիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերուն, երբ մարդու հանճարը թոփչք է առած նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ, մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի ըլլար տեսնել հաղթանակը նույն մարդու քարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի քարձուներեն՝ աշխարհին քերելով պատգամը Աստուծո. «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

1959 թ. հոկտեմբերի 13-ին Հայոց Հայրապետը ս. Էջմիածնից ողջույնի խոսք էր ուղղում, հոգուտ խաղաղության, ՍՍՀՄ Միահստրների սովետի նախագահին և ԱՄՆ-ի պրեզիդենտին՝ ճշելով. «Մենք ի մասնավոր

րի կողջունենք Սովետական Միության մեծարգո վարչապետին և Միացյալ Նահանգաց մեծարգո նախագահին, որոնք պատմական այս օրերին կպատրաստվին համայն մարդկության մատուցելու բոլոր ժամանակներու մեծագույն և ամենաթանկագին՝ ընծան՝ խաղաղությունը, ամբողջական և տեսական խաղաղություն՝ բոլոր ժողովուրդներուն, բոլոր երկիրներուն:

Պատերազմ գոծող մուսլ ամպերը տակավ ցրվում են ահա, և մարդկային կյանքի երկնականաբար սկսում է պայծառանալ»:


1961 թ. հունիսի 13-ին Հայոց Հայրապետը, ի գլուխ հայ եկեղեցու մի մեծ պատգամավորության, մասնակցում էր Պրագայի համաքրիստոնեական համաշխարհային խաղաղության կոնգրեսին, ուր հանդես էր գալիս հունիսի 14-ին «Խաղաղություն և քրիստոնեական արդարություն» թեմայի շուրջ բովանդակալից ճառով՝ ճշելով. «Անտարակույս, առանց արդարության, մարդկային անհատի և հավաքականության համար կարելի չէ ապահովել կյանքի մեջ խաղաղ գոյավիճակ: Խաղաղությունը կյանքի առողջ և շինարար ուժերի, ժամանակների հոլովույթով հետզհետե վերանորոգվող ու զարգացող ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության քարոյական օրենքի լույսի տակ... Այսպես է, որ կարելի կլինի ստեղծել մարդկային կյանքի մեջ արդար հարաբերություններ և արդար պայմաններ»:

Հետագա տարիներին ևս Հայոց Հայրապետի համաձայնությամբ Մայր Աթոռի զանազան պատգամավորություններ միշտ մասնակցել են Պրագայի և այլուր կայացած խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսներին և ասել իրենց խոսքը՝ ի պաշտպանություն խաղաղության:

1962 թ. հուլիսի 13-ին Հայոց Հայրապետը Զագորսկում մասնակցում էր ընդհանուր զինաթափման և խաղաղության պաշտպանության հարցերին նվիրված համաշխարհային մեծ համագումարին, ուր հանդես էր գալիս դարձյալ մեծ ճառով՝ ճշելով, «Քրիստոնեությունը ինքը խաղաղության և մարդասիրության մի առաքելություն է մարդկային աշխարհի մեջ: Հետևաբար, երկյուղի և անստուգության մեջ տառապող այսօրվա մարդկությանը՝ պարտինք մանավանդ մենք՝ հոգևորականներս, ցույց տալ խաղաղության և ամբողջական զինաթափման ճանապարհը: Ատոմական դարաշրջանի պայմանների մեջ այլևս կարելի չէ քրիստոնեյա լինել, մարդ լինել և խաղաղության դատին պաշտպան չհանդիսանալ և չգործել խաղաղության հաղթանակի համար:

Ոչ մեկ ընկերային, քաղաքական, ազգային կամ միջազգային հարց այլևս կարելի

չէ լուծել պատերազմով: Պատերազմի հնարավորությունը պետք է մարդկային կյանքի մտածումից դուրս վանել իբրև միջազգային իրավունքի գերագույն կանոն:



1965 թ. հուլիսի 12-ին Հայոց Հայրապետը, դարձյալ ի գլուխ հայ եկեղեցու մի մեծ պատգամավորության, մասնակցում էր Հելսինկիի խաղաղության համաժողովին, որը գումարվել էր՝ քննարկելու համար խաղաղության հարցի բոլոր կողմերը համաշխարհային մերկա պայմանների մեջ, մանավանդ Վիետնամում բորբոքվող պատերազմի առնչությամբ: Այստեղ ևս Հայոց Հայրապետը հանդես եկավ խաղաղության պաշտպանության ի նպաստ մեծ ճառով՝ շեշտելով. «Ընդդիմանալ պատերազմին, կնշանակե հպատակիլ Աստուծո կամքին: Մարդկությունը կրնա և պետք է ապրի առանց պատերազմների»:

Միջեկեղեցական և միջպետական հանդիպումների ժամանակ և միջազգային ամբիոններից, խոսելով խաղաղության մասին, Հայոց Հայրապետը չէր մոռանում նաև հիշել ու դատապարտել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ հայկական Ապրիլյան եղեռնը, որին, ինչպես նշվեց, զոհ գնաց մեկուկես միլիոն հայություն, ցեղասպանու-

թյուն, որը, գաղափարապես և գործնականապես անպատիժ մնալով, դուր քացավ, ինչպես գիտենք, այլ զարհուրելի ցեղասպանությունների: «Իբրև գլուխ եկեղեցիի մը և կրոնապետը ժողովուրդի մը, որ անցյալի մեջ բազում անգամներ ահավոր ջարդերով զոհ գացած է ուրիշ պետություններու պատերազմներու ընթացքին և մանավանդ 1915 թ., մենք ջերմապես աղոթող ենք, որ այլևս ոչ մեկ տեղ աշխարհի վրա չկրկնվեն նման ողբերգություններ», — հայտարարել է Հայոց Հայրապետը 1968 թ. մայիսի 2-ին Նյու-Յորքում ՄԱԿ-ի դահլիճում պաշտոնական ընդունելության ժամանակ, ի ներկայության ավելի քան 20 պետությունների դեսպանների: Ահա թե ինչու, եզրակացնում է Հայոց Հայրապետը, «հայ եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը, ս. Էջմիածնի գլխավորությամբ, հայրենիքում և արտաքինում, կանգնած է եղել և շարունակում է կանգնած մնալ հայ ժողովուրդի և հայրենիքի գերագույն իդեալի՝ խաղաղության պաշտպանության դիրքերում»:

1969 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը Էջմիածնում գումարվեց հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի: Սույն ժողովին ներկա են եղել 25 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի կարելիոր հարցերից մեկն է եղել նաև «Հայաստանյայց եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդումը» հարցը, որի մասին ընդարձակ զեկուցումով հանդես է եկել, հանուն ժողովի, Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ և Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը: Եպիսկոպոսաց ժողովը միաձայնությամբ ընդունել է խաղաղության պաշտպանության ի նպաստ հետևյալ բանաձև-կոչը.

«Մենք պատվեր կտանք մեր եկեղեցվո նպաստավորներուն և հավատացյալներուն արթուն և արտեռանդն կերպով պաշտպան կանգնիլ աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու համերաշխ գործակցության դատին, իրավունքի, արդարության և ազատության նվիրական սկզբունքներու լուսինները»:

Ինչպես բովանդակ մարդկությունը, այնպես էլ հայ հավատացյալ ժողովուրդը հասկանում են խաղաղության պաշտպանության կենսական անհրաժեշտությունը: Ահա թե ինչու խաղաղության օգտին ծավալված շարժումը մեզ համար ևս ունի համաշխարհային նշանակություն և համաժողովրդական գործի բնույթ: Ահա թե ինչու նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթը լայնորեն իր էջերն

էր արամադրում խաղաղության պաշտպանության հետ կապված ամեն մի իրադարձության:

Դարեր շարունակ մեր եկեղեցու կամարների տակ միշտ հնչել են խաղաղության օրհներգներն ու ալելույաները, և մեր պապերը երկյուղածորեն ու սրբությամբ աղոթել են՝ «Ձի լուեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի...», որպէսզի գալիք երջանիկ օրերին, ըստ Եսայի մարգարեի՝ «Եւ ձուլեսցեն գտուերն իւրեանց ի խոփս, և գտոինս իւրեանց ի մանգաղս, ոչ առնու ազգ յազգի վերայ սուր, և ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ» (Եսայի Բ 4):

Մենք համոզված ենք, որ խաղաղությունը, սերն ու աշխատանքը կհաղթեն պատերազմին, և արդարությունն ու իրավունքը կդառնան խաղաղասեր ազնիվ ժողովուրդների սեփականությունը սուրբ:

1969 թվականի հուլիսի 4-ին ռուս եկեղեցու հոգևոր կենտրոն Ջագորսկում Վեհափառ Հայրապետը խաղաղության համաժողովի Իր ելույթում այդպես էլ նշել է. «Արդ, ջերմ եռանդով աղոթենք և Աստուծո ողոր-

մությունը հայցենք, որպէսզի պահպանվի խաղաղ համագործակցությունն աշխարհի վրա, բոլոր ժողովուրդների միջև: Չբավարարվենք սակայն միայն աղոթքով: Աստված պետք է տեսնե, որ մենք արժանի ենք Իր ողորմության: Մենք կենդանի գործով արդարացնենք զմեզ Աստուծո դատաստանի առջև: Զգանք և գիտակցենք, թե մենք, եկեղեցիներու և կրոնական հաստատություններու ղեկավարներս, պատասխանատւութեան բաժին ունինք այսօրվան ստեղծված այս վտանգավոր կացության առջև, հետևաբար նույն չափով գոնե պարտականությունը ունինք մեր կենդանի գործով միջամտելու, կանգնեցնելու համար պատերազմի մեքենան և վերացնելու համար բոլոր այն պատճառները, որոնք ժողովուրդներու միջև թշնամության և ատելության որոմը կցանեն:

Այս գիտակցությամբ և հավատով է գործել և աշխատել նաև «Էջմիածին» ամսագիրը՝ իր գործոն մասնակցությունը բերելով խաղաղության դատի պաշտպանությանը՝ առաջնորդվելով նաև մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր վերածնված մայր հայրենիքի գերագույն շահերով:

